

ՄԵՐ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՆԱՄԱԿ ՅՐԱՆՄԻԱՅԻՑ

ՆիՑ 28 ապրիլ 1905
11 մայիս

Ստացայ «Լուսնայի» Բ. գիրքը, որ կարդացի մեծ հետաքրքրութեամբ: Այդ համարի մէջ տպուած Մակար Եկմալեանի կենսագրական տեղեկութիւններից առաջին անգամ իմացայ, որ նրա և Ներսիսեան դպրանոցի ուսուցչական խմբի մէջ մեծ և սուր տարաձայնութիւններ են եղել, որ նա և ուսուցիչներին մեծագոյն մասը, եթէ ոչ ուսուցչական դասը, զատուած էին, խուսափում էին իրարից և այդպիսով մնալով մենակ՝ խեղճ Եկմալեանը սափալուած էր իր դասերի մէջերջում իր համար այլ տեղ պտրել, խուսափելով ուսուցչական սենեկից:

Դա բացառիկ փաստ չէ, որ արժանաւոր, մեծ օգուտ ու ծառայութիւն բերած գործիչները, որոնց յիշատակը յարգուած է ու մինչև անգամ յաւիտեան պիտի յիշուի, ինչպէս և Եկմալեանի անունը պիտի յիշուի մինչև մեր սուրբ և հարազատ եկեղեցին կանգուն կայ, այսինքն յաւիտեան— իրանց կենանքի ժամանակ հալածուած էին թէ իրանց կարծիքների նորութեան ու ժամանակակիցներին անհասկանալի լինելու պատճառով կամ թէ իրանց դէմ լարուած ինտրիգների շնորհիւ և կամ իրանց անհաշտելի բնաւորութեան համար:

Բայց այսպէս թէ այնպէս Եկմալեանի կրած ասնջանքները հետեանք էին այն նեղ հայեացքների, որոնք կարելի է ասել, տիրում են մեր գրող ու կարդացող հասարակութեան մէջ, անգամ մեր կրթուած դասի մէջ և այդ նեղ հայեացքները բնութեան հետեանքն է, որ մեր մէջ այն մարդը, որը չէ պատկանում ձեզ ինչպէս գաղափարակից, արհամարհուած է լինում իր ոչ գաղափարակիցներից, անգամ ատուած. իսկ իդէաներով միմեանց համակրողների շատ ու շատ ոչ բազմամարդ խմբեր

կան և նրանց մէջն է բաժանուած մեր ինտելիգէնցիան ու այդ խմբերի դէպ իրար ունեցած յարաբերութիւնն է պատճառը, որ ինտելիգէնցիան, ուր նա բազմաթիւ է, ինչպէս օրթիֆիլիս, Բագու, Ռոստով-Նախիջևան, Պետերբուրգ ու Մոսկուա, ոչինչ նշանաւոր, ոչինչ իր միացած ուժին արժանի գործ արած չէ, այլ անգամ նոյն պատճառներից հետևում են այնպիսի յարաբերութիւններ, ինչպէս որ եղան Եկմալեանի ու իր դասատու ընկերների մէջ. յարաբերութիւններ, որոնք ստորացնում էին մարդկային արժանաւորութիւնը Եկմալեանի մէջ ու պատճառած էին մեր խեղճ գործչին ահագին բարոյական տանջանքներ:

Իհարկէ, զարգացումը ամրապնդուելով հասարակութեան մէջ, դառնալով բազմակողմանի ու ստեղծելով լայն կարծիքների ու հայեացքների մարդիկ, կը ոչնչացնի մեր մէջ այդ նեղ կուսակցական յարաբերութիւնները մեր ուսում առած, բայց դեռ չկրթուած հասարակութիւնից, իսկ որպէս զի մենք ունենանք կրթուած և լայն հայեացքներով հասարակութիւն, դրա համար հարկաւոր է մի քանի սերունդ: Առանձին մարդիկ այդ գաղափարներով տոգորուած, շնորհիւ իրանց ընդունակութիւնների, իրանց տոկուն պարապմունքների՝ կան ու կլինին, բայց մեր այժմեան ուսում առած հասարակութիւնը այդպէս չէ. նա ներողամիտ չէ ուրիշի կարծիքներին. նրա մէջ լայն հայեացքները, որոնք կարող են հաւաքել շատերին ու գործել տալ միասին—խոր արմատ չունի և այդ է պատճառը, որ մեր ինտելիգէնցիան իր միացած ոյժերով շատ քիչ բան է արել թէ մեր կրթական գործում և թէ մեր ժողովրդի տնտեսական դրութիւնը բարձրելու մէջ:

Շատ ցանկալի կլինէր, որ շուտով հրատարակուէր Եկմալեանի մի լաւ կազմած կենսագրութիւն:

*

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՄԻՑ

5 Մայիս 1905

. . . Տէր Խմբագիր «Լոււմայ» պատուական ամսագրի

Մնդակցութեամբ ողջունելով «Լոււմայ»-ի իբրև ամսագիր քի լոյս ընծայումն, կը մաղթեմ անխոնջ աշխատասիրողիդ և հրատարակչիդ կարողութիւն, և բոլոր ձեռնարկութեանցդ և գործոցդ յաջողութիւն և յարատևութիւն: